

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՍԱՏՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԻՄՈՆԻ

ԽԱՂՈՂԱԳԻՆԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՈՒՄ

Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում»
մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2023

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում

Գիտական ղեկավար՝

Տնտեսագիտության թեկնածու,
ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ ՍԱՄՎԵԼԻ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
ԲՈՍՏԱՆՋՅԱՆ ՎԱՐԴԱՆ ԲԱԲԿԵՆԻ

Տնտեսագիտության թեկնածու,
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ ԱԼԵՔՍԱՆԻ

Առաջատար կազմակերպություն՝


ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2023թ. դեկտեմբերի 14-ին ժամը 13:30-ին, Երևանի պետական համալսարանում (0025, ք. Երևան, Աբովյան փ. 52) գործող ՀՀ ԲՈԿ-ի Տնտեսագիտության 015 մասնագիտական խորհրդում:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2023թ. նոյեմբերի 8-ին:

015 Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
տնտեսագիտության թեկնածու՝



Հակոբջանյան Աննա Հովիկի

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի առոհականություն: Ըստ Համաշխարհային Բանկի տվյալների ՀՀ-ն զարգացող երկիր է, որը դասվում է միջինից բարձր եկամուտներ ունեցող երկրների շարքում, և որի միջազգային առևտրի սալոնը բացասական է: ՀՀ արտաքին առևտրի հաշվեկշռի վերլուծությունից պարզ է դառնում, որ արտահանման ծավալները էապես գիջում են ներկրման ծավալներին, մասնավորապես 2022 թվականի ՀՀ առևտրի հաշվեկշիռը կազմել է -3408,6 մլն դոլար: ՀՀ-ից արտահանվող փոքրաքանակ ապրանքատեսակների կազմում իրենց ուրույն տեղն ունեն գյուղատնտեսական թարմ մթերքները և դրանց վերամշակումից ստացվող արտադրանքները: Մասնավորապես խաղողը և դրա վերամշակումից ստացվող հայկական արևահամ կոնյակն ու գինիները համարվում են Հայաստանի այցեքարտերից մեկը արտաքին շուկաներում: ՀՀ արտաքին առևտրի վերլուծություններից ակնհայտ է դառնում, որ 2021 թվականին պարենային ապրանքների տեսակարար կշիռը արտահանման կառուցվածքում կազմել է 30,5%, ընդ որում այլոհոլային և ոչ այլոհոլային խմիչքների տեսակարար կշիռը կազմել է 9,6%: Այս ապրանքախմբի հիմնական մասը ներկայացնում են կոնյակը և խաղողի գինին, որոնք հանդիսանում են արտաքին առևտրով ՀՀ-ից արտահանված առավել բարձր մաքսային արժեք ունեցող ապրանքներ:

Խաղողագործությունը ՀՀ գյուղատնտեսության հնագույն և ավանդական ճյուղերից մեկն է: Այն գյուղատնտեսական արտադրության համեմատաբար աշխատատար ճյուղ է, ինչի հաշվին գյուղական բնակավայրերում ապահովում է բնակչության զբաղվածություն բարձր մակարդակ: Բացի այդ՝ ազգային տնտեսության համար այնպիսի կենսական կարևորություն ունեցող ճյուղերի բնականոն գործունեությունը, ինչպիսիք են գինեգործությունը և կոնյակագործությունը, մեծապես պայմանավորված է խաղողագործության վիճակով: Ըստ էության, խաղողագործությունը, կոնյակագործությունը, գինեգործությունը պետք է դիտարկել մեկ ընդհանուր համակարգի՝ խաղողագինեգործական համալիրի համատեքստում, քանզի տնտեսության այս ճյուղերը սերտորեն կապված են միմյանց և հանդիսանում են խաղողի հումքով ոգելից խմիչքների արժեշտայի կարևորագույն օղակները: Խաղողագինեգործական համալիրի մեջ ներառվում են «խաղողի արտադրություն/վերամշակում-վերջնական արտադրանքի սպառում» արժեշտայի բոլոր մասնակից տնտեսավարող սուբյեկտները (խաղողի մթերում, գինեհումքի թորում, չամիչի արտադրություն, վերջնական-պատրաստի արտադրանքի թողարկում, ինչպես նաև թողարկվող արտադրանքի գնամաք, պահեստավորմամբ, տեղափոխմամբ և վաճառքով զբաղվող կազմակերպությունները): Թվարկված օղակները մեկ ամբողջական արժեշտայի առանձին օղակներն են, որոնք կապված են իրար բազմաթիվ կազմակերպական, տեխնոլոգիական, տնտեսական կապերով:

¹ ՀՀ մաքսային ծառայություն, ՀՀ արտաքին առևտրին ըստ արտաքինների, ՀՀ արտահանման և ներմուծման կառուցվածքը արտաքին և փոխադարձ առևտրում (2021թ.), արդյուրդ՝ <https://www.petek.amutner.am/Content.aspx?itn=cslForeignTradeByProducts>, վերջին մուտք՝ 25/05/2023:

« Խաղողագինեգործական համալիրի համար ճգնաժամային էին անկախացման տարիները, երբ գինու ու կոնյակի և՛ ներքին և՛ արտաքին շուկաներում իրացման ծավալների կտրուկ կրճատումը, արտահանման դժվարությունները բերեցին գործունեության հետագա շարունակության անհնարինության: Չնայած այն հանգամանքին, որ Խաղողագործությունը գյուղատնտեսության համեմատաբար բարձր արդյունավետություն ապահովող ճյուղ է, այն կորցեց իր հետաքրքրությունը գյուղացիական տնտեսությունների համար: Արդյունքում, եթե Խաղողի ընդամենը տարածությունը 1991 թվականին կազմում էր 25.2 հազար հեկտար, ապա 2001 թվականին այն կրճատվել էր 44.0%-ով՝ հասնելով 14.1 հազար հեկտարի: Իրավիճակը սկսեց կայունանալ 1990-ական թվականների վերջից սկսած և արդեն 2000-ական թվականներին Խաղողագինեգործական համալիրը թևակոխեց զարգացման նոր շրջան, որի կայուն զարգացման հիմնական շարժիչ ուժը դարձավ կոնյակի արտադրությունը: Աշխարհագրական տեղաբաշխման առումով համալիրի համար առանցքային միավոր է « Արմավիրի մարզը, որտեղ կենտրոնացած են Խաղողի այգետարածքների ավելի քան 40%-ը, համախառն բերքի 44,9%-ը և վերամշակող կազմակերպությունների գործարանների զգալի մասը: Արմավիրի մարզի բարենպաստ բնակլիմայական և տնտեսական պայմանները առավելագույնս նպաստում են համալիրի ճյուղերի զարգացմանը և մեծապես պայմանավորում են համալիրի հետագա զարգացման հեռանկարները: Տևական ճգնաժամերից հետո « Խաղողագինեգործական համալիրում վերջին տարիներին գրանցվել է որոշակի աճ և զարգացում, և այդ միտումները պահպանելու նպատակով խիստ կարևոր է ոլորտի առջև ծառայած նոր մարտահրավերներն ու խոչընդոտները ժամանակին բացահայտելը և դրանց լուծման ուղիներ որոնելը: Խաղողագինեգործական համալիրի զարգացման հեռանկարների բազմակողմանի ու արդիական ուսումնասիրության անհրաժեշտությունը պայմանավորվում է համաշխարհային տնտեսությունում տեղի ունեցող այնպիսի զարգացումներով, ինչպիսիք են հետքովիդյան տնտեսական նոր իրողությունները, ռուս-ուկրաինական հակամարտությունը և դրա տնտեսական հետևանքները:

Ատենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է « Արմավիրի մարզում Խաղողագինեգործական համալիրի ունեցած տնտեսական, սոցիալական և ժողովրդագրական կարևոր նշանակությամբ: Ոլորտի հետագա զարգացումը և դրա համատեքստում Խաղողագինեգործական արտադրանքի մրցունակության բարձրացումը ենթադրում են Խաղողագործության, կոնյակագործության և գինեգործության ճյուղերում գործունեության արդյունավետության բարձրացումը, ինչով էլ պայմանավորված է ընտրված թեմայի արդիականությունը:

Տեսագոտության նպատակներն ու խնդիրները: Ատենախոսության հիմնական նպատակն է « Արմավիրի մարզի Խաղողագինեգործական համալիրի հեռանկարային զարգացման հիմնահարցերի համակողմանի բացահայտումն ու դրանց լուծման ուղիների առաջադրումը: Այդ նպատակի իրականացման

համատեքստում ատենախոսության շրջանակներում նախանշվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել խաղողագործության, կոնյակագործության և գինեգործության ճյուղերի զարգացման վիճակն ու միտումները ՀՀ-ում,
- վերլուծել խաղողագինեգործական համալիրի ուսումնասիրությունների տարբեր մեթոդաբանական ասպեկտները, այդ մոտեցումների արտասահմանյան փորձը,
- վերլուծել խաղողագինեգործական համալիրը կարգավորող իրավաօրենսդրական դաշտը և դրա ազդեցությունը ոլորտի գործունեության վրա,
- վերլուծել ՀՀ խաղողագինեգործական համալիրի պետական կարգավորման առանձնահատկությունները,
- ուսումնասիրել ՀՀ Արմավիրի մարզի խաղողագործության վիճակը, խաղողագործական տնտեսությունների արտադրատնտեսական առանձնահատկությունները,
- ՀՀ Արմավիրի մարզի խաղողագործական տնտեսությունների առջև ծառայած արդի խնդիրների համակողմանի վերլուծության և բացահայտման նպատակով կատարել հարցումներ՝ ընտրանքային հարցումների մեթոդի կիրառմամբ,
- իրականացնել ՀՀ խաղողագործության ճյուղի արդյունքային ցուցանիշների վրա տարբեր տնտեսական գործոնների ազդեցության էկոնոմետրիկ գնահատում,
- գնահատել Արմավիրի մարզի խաղողագործական տնտեսությունների գործունեության տնտեսական արդյունավետությունը և դրա վրա տարբեր ներտնտեսային և արտաքին գործոնների ազդեցության բնույթը,
- կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա բացահայտել ոլորտում առկա հիմնախնդիրները,
- մշակել խաղողագինեգործական համալիրի խնդիրների լուծմանն ու համալիրի զարգացմանն ուղղված առաջարկություններ:

Ատենախոսության օբյեկտը և առարկան: Ատենախոսության հետազոտության օբյեկտը ՀՀ Արմավիրի մարզի խաղողագինեգործական համալիրն է, իսկ հետազոտության առարկան՝ համալիրի հեռանկարային զարգացման տնտեսագիտական հիմնահարցերը:

Ատենախոսության տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը: Ատենախոսության մեջ իրականացված ուսումնասիրությունների և վերլուծությունների համար տեսական հիմք են հանդիսացել հայ և օտարերկրյա տնտեսագետների աշխատանքները, որոնք վերաբերվում են խաղողագինեգործական համալիրի արտադրատնտեսական հարաբերությունների ուսումնասիրությանը, տնտեսավարողների միջև փոխհարաբերություններին, ոլորտի քանակական և որակական հետազոտությանը, այդ հետազոտության մեթոդաբանական հիմքերին և այլն:

Ատենախոսության մեջ կիրառվել են գիտական հետազոտության այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են ինդուկցիան, դեդուկցիան, խմբավորումները, կառուցված-

քային նկարագրությունը, տնտեսամաթեմատիկական մոդելավորումը, վիճակագրական մեթոդները, բազմագործոն և միագործոն էկոնոմետրիկ վերլուծությունները և այլն:

Ուսումնասիրությունների համար տեղեկատվական հիմք են հանդիսացել խաղողագիներգործության ոլորտին վերաբերվող օրենսդրաիրավական ակտերը, Վիճակագրական կոմիտեի հրապարակումները, ՀՀ էկոնոմիկայի նախարարության, Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի և այլ պետական մարմինների և մասնավոր կազմակերպությունների հրապարակած հաշվետվությունները, տարբեր վերլուծական, տեղեկատվական նյութեր, ինչպես նաև հեղինակի կողմից կատարված ընտրանքային հետազոտությունների արդյունքները:

Ատենախոսության գիտական նորույթ: Ատենախոսության մեջ իրականացված վերլուծությունների և հետազոտությունների արդյունքներից գիտական նորույթ կարելի է համարել հետևյալները.

- գնահատվել է ՀՀ Արմավիրի մարզի խաղողագործական տնտեսությունների գործունեության արդյունավետությունը և առաջադրվել են տնտեսությունների վարման արդյունավետ տարբերակները,
- ՀՀ Արմավիրի մարզի խաղողագործական տնտեսությունների համակողմանի ուսումնասիրության արդյունքում բացահայտվել են մարզի խաղողագիներգործական համալիրի հիմնախնդիրները, և գնահատվել են զարգացման հնարավորությունները,
- բացահայտվել է ՀՀ խաղողագործության ճյուղի արդյունքային ցուցանիշների վրա տարբեր գործոնների ազդեցության բնույթը,
- առաջադրվել են ՀՀ Արմավիրի մարզի խաղողագիներգործական համալիրի հիմնախնդիրների լուծման հիմնական ուղղությունները:

Ատենախոսության արդյունքների գործնական և կիրառական նշանակությունը: Թեկնածուական ատենախոսության շրջանակներում ստացված արդյունքները և դրանում ներկայացված առաջարկությունները կարող են օգտագործվել ՀՀ Կառավարության, մասնավորապես ՀՀ էկոնոմիկայի նախարարության և շահակիր այլ պետական մարմինների կողմից՝ օրենսդրական նախագծերի, ոլորտի ռազմավարական փաստաթղթերի մշակման, վարվող պետական քաղաքականության, կիրառվող պետական աջակցության ծրագրերի կատարելագործմանն ուղղված գործընթացներում, ինչպես նաև խաղողագիներգործությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների, մասնավոր հատվածի ներդրողների կողմից՝ ոլորտի վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն ստանալու, իրենց գործունեությունը պլանավորելու, ինչպես նաև կառավարման գործընթացների արդյունավետությունը բարձրացնելու գործընթացներում:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումը: Ատենախոսության հիմնական դրույթները քննարկվել են ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան Տնտեսագիտության ինստիտուտի գիտական խորհրդի նիստում, ինչպես նաև մի շարք հանրապետական ու միջազգային գիտաժողովի ընթացքում:

Ատենախոսության հիմնական դրույթներն ու նորույթները ամփոփված են հրատարակված 6 գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածից: Շարադրված է 152 էջ ծավալով՝ առանց հավելվածների, պարունակում է 28 աղյուսակ, 12 գծապատկեր, 2 նկար:


ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորված է թեմայի արդիականությունը, ձևակերպված են հետազոտության նպատակն ու խնդիրները, ներկայացված են ուսումնասիրության օբյեկտը և առարկան, ներկայացված են հետազոտության հիմնական արդյունքներն ու գիտական նորույթը, դրանց գիտագործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «**ՀՀ խաղողագիներգործական համալիրի վիճակը, տնտեսական նշանակությունը ազգային տնտեսության համակարգում և զարգացման նախադրյալները**» գլխում ուսումնասիրվել են ՀՀ խաղողագործության, կոնյակագործության ու գինեգործության ճյուղերի վիճակը և միտումները:

Կատարված ուսումնասիրություններից պարզ է դառնում, որ ՀՀ-ում խաղողագործության ճյուղի հիմնական արդյունքային ցուցանիշների՝ համախառն բերքի և միջին բերքատվության, դինամիկան բնութագրվում է աճի միտումներով, սակայն այգետարածքների ցուցանիշի դինամիկան նվազող է, ինչը վկայում է ոլորտում առկա լրջագույն խնդիրների մասին: Շյուղում գործում են մեծ թվով փոքր գյուղացիական տնտեսություններ, որոնց մեծ մասի տնտեսության չափերը չեն գերազանցում 1,0հա-ը: ՀՀ-ում մշակվում են հիմնականում խաղողի տեխնիկական սորտեր, որոնք նախատեսված են կոնյակի, գինու և այլ խմիչքների արտադրության համար, ուստի, խաղողագործության ճյուղի զարգացման հեռանկարները նախանշելիս, կարևորվում է վերամշակող ճյուղերի առանցքային նշանակությունը:

Ներկայումս ՀՀ-ում խաղողագործության արդյունքային ցուցանիշներով առաջատար է հանդիսանում Արմավիրի մարզը, մասնավորապես՝ խաղողի այգետարածքների և համախառն բերքի 40%-ից ավելին բաժին է ընկնում այս մարզին, իսկ մարզի խաղողի միջին բերքատվության ցուցանիշը գերազանցում է հանրապետական միջինին: Մարզում մշակվում են խաղողի ինչպես տեխնիկական, այնպես էլ՝ սեղանի սորտեր: Հանրապետության սեղանի սորտերի խաղողի այգիների տարածքի 41%-ը, իսկ տեխնիկական սորտերի 43%-ը մշակվում են Արմավիրի մարզում (Գծապատկեր 1): Մարզում խաղողագործական տնտեսությունների ընդհանուր թիվը կազմում է 19461, որոնցից այգետարածքներում խաղողի մշակությամբ զբաղվում են 5781-ը:




Գծապատկեր 1. ՀՀ խաղողի այգետարածքների կառուցվածքն ըստ մարզերի 2022 թվականին²

ՀՀ-ում խաղող վերամշակող հիմնական ճյուղերը՝ կոնյակագործությունը և գինեգործությունը բնութագրվում են արտադրության և արտահանման ծավալների աճով: Այս ճյուղերում նկատվում է տնտեսական ակտիվության բարձր մակարդակ. վերջին տասնամյակում ավելացել է ինչպես այս ճյուղերում գործող կազմակերպությունների, այնպես էլ՝ աշխատողների թվաքանակը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ լրջագույն խնդիրներ առկա են նաև խաղողի մթերման գործընթացներում, որոնք պայմանավորված են մի կողմից շուկայում առաջարկի ավելցուկով, մյուս կողմից՝ կոնյակագործության ճյուղում մրցակցային անբարենպաստ միջավայրի առկայությամբ: Խաղողագործների, որպես հումքի մատակարարների, սակարկելու հնարավորությունները սահմանափակ են, իսկ մյուս մատակարարները (սարքավորումների, տեխնոլոգիայի և այլի), ի հակադրություն խաղողագործների, վերամշակողների նկատմամբ ունեն սակարկելու բարձր հնարավորություններ:

Ատենախոսության տվյալ գլխում կատարված վերլուծությունների արդյունքում պարզ է դարձել, որ ՀՀ-ում դիտվում է անհամամասնություն խաղողի արտադրության ծավալների աճի տեմպերի և դրա վերամշակումից ստացվող կոնյակի և գինու արտադրության ծավալների աճի տեմպերի միջև: Գծապատկեր 2-ում ներկայացված են 2010-2021 թվականներին խաղողի գինու, կոնյակի և խաղողի արտադրության ծավալների աճի տեմպերը, որտեղ ակնհայտորեն երևում է կոնյակի և գինու արտադրության ծավալների թռիչքաձև աճը նախորդ տասնամյակում, մինչդեռ խաղողի համախառն բերքի ծավալների փոփոխությունը նմանատիպ չէ, իսկ առանձին տարիներին (2016-2019 թթ.) գրանցվել են անգամ անկումներ:

² Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակած վիճակագրական տվյալների հիման վրա:



Գծապատկեր 2. Խաղողի գինու, կոնյակի և խաղողի արտադրության ծավալների աճի տեմպերը ՀՀ-ում 2010-2021 թթ.³

Ստացվում է, որ խաղողագինեգործական համալիրի ճյուղերի զարգացման միջև օրգանական կապ չի գործում, առկա է որոշակի խզում, որի պայմաններում անհնար է պատկերացնել ընդհանուր խաղողագինեգործական համալիրի զարգացումը: Ըստ էության, գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ խաղողի արտադրության ծավալները էականորեն չեն ավելացել, սակայն դրա վերամշակումից ստացվող կոնյակի և գինու արտադրության ծավալները կրնկնապատկվել և եռապատկվել են, ընդ որում 2020-2021 թվականներին արձանագրվել են խաղողի մթերման դժվարություններ: Ըստ էության վերամշակող կազմակերպությունները ավելացնում են արտադրության ծավալները, սակայն հումքի պահանջարկը դրանից չի փոխվում, ինչի պատճառներից մեկը, մեր գնահատմամբ, ներկրված հումքի, տվյալ պարագայում սպիրտների օգտագործումն է: Տնտեսավարողների կողմից ներկրված հումքով ակոհուլային խմիչքների արտադրությունը և «Հայկական կոնյակի» կամ աշխարհագրական նշումով գինիների անվան տակ վաճառահանումը արատավոր երևույթ է, որը մի կողմից օրենքի կոպիտ խախտում է հանդիսանում, մյուս կողմից վնասում է արտաքին ու ներքին շուկաներում «Հայկական կոնյակի», գինու բրենդն ու խմիչքը և մյուս կողմից՝ կոնյակի և գինու շրջանառության ոլորտներում առաջացնում է անբարեխիղճ մրցակցություն:

³ Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից՝ ՀՀ Վիճակագրական կոմիտեի հրապարակած տվյալների հիման վրա:

Ատենախոսության երկրորդ՝ «Խաղողագինեգործական համալիրի ուսումնասիրության մեթոդաբանական մոտեցումները, ոլորտում պետական քաղաքականության վերլուծությունը և զարգացման հնարավորությունների գնահատումը Արմավիրի մարզում» գլխում ուսումնասիրվել են.

- խաղողագինեգործության ոլորտի արտասահմանյան և հայրենական տնտեսագիտական հետազոտությունները,
- ՀՀ-ում ոլորտը կարգավորող օրենսդրաիրավական դաշտը, կիրառվող պետական քաղաքականությունը և ոլորտի վերահսկողական կառուցակարգերը,
- Արմավիրի մարզում խաղողագործության ճյուղի վիճակը: Խաղողագինեգործական համալիրի հետազոտությունների, մեթոդաբանական տարբեր մոտեցումների ուսումնասիրություններում ոլորտի հետագա զարգացումը շատ հետազոտողներ դիտարկում են կլիմայական փոփոխությունների և գլոբալ տաքացման համատեքստում: Ոլորտի հետագա զարգացման գնահատման հիմքում հետազոտողներից շատերը դնում են խաղողագինեգործական կազմակերպությունների գործունեության արդյունավետությունը կամ եկամտաբերությունը: Ոլորտի կազմակերպությունների գործունեության քանակական գնահատման նպատակով օգտագործվում են այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են տնտեսամաթեմատիկական մոդելավորումը, էկոնոմետրիկ ռեգրեսիոն վերլուծությունը, Տոբիթ, Լոգիթ, Պրոբիթ մոդելավորումները և այլն: Նշված ընդհանրացումները մեթոդաբանական հիմք են հանդիսացել ատենախոսության շրջանակներում հետագա քանակական գնահատումների իրականացման համար:

ՀՀ-ում խաղողագինեգործական համալիրին առնչվող պետական քաղաքականությունը արտացոլված է «ՀՀ գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների» և «Հայաստանի գինու ոլորտի զարգացման 2023-2032 թվականների» ռազմավարություններում: Ռազմավարություններում և դրանց իրագործումն ապահովող գործողությունների ծրագրերում ներկայացվում են խաղողագինեգործության ոլորտի իրատեսական զարգացման ուղղությունները և հնարավորությունները, սակայն դրանց իրականացումը և կյանքի կոչումը արվում է մասամբ, ինչի արդյունքում ցանկալի, շոշափելի արդյունքներ չեն ապահովվում: Մեր գնահատմամբ անհրաժեշտություն կա մշակելու այդ ռազմավարական դրույթների ու ծրագրերի իրականացման գործուն մեխանիզմների մշակման ու ներդրման կարիք: Պետական ագրարային քաղաքականության շրջանակներում իրականացվում են գյուղատնտեսության աջակցության տասնհինգ ծրագրեր, որոնցից խաղողագինեգործության ոլորտին առնչվում են երեքը: Առկա և նախկինում իրականացված ծրագրերից որոշները ունեցել են դրական արդյունքներ, սակայն ծրագրերի մի մասն էլ նման արդյունք չի ապահովում, ինչը վկայում է որոշակի լրացումների ու փոփոխությունների անհրաժեշտության մասին: Մեր գնահատմամբ պետական աջակցության ծրագրերի հետագա կատարելագործումը խաղողագինեգործական համալիրի հետագա զարգացմունն ապահովող ներուժային ու հեռանկարային գործընթացներից:

«Հ-ում խաղողագինեգործական համալիրի օրենսդրաիրավական կարգավորման հիմնաքարը «խաղողի հումքով ոգելից խմիչքների մասին» օրենքն է, որում համակողմանիորեն ամրագրված է ոլորտի կարգավորման հիմնական գործիքակազմերն ու կառուցակարգերը, սակայն մեր գնահատմամբ, հաշվի առնելով առկա իրողությունները և ոլորտում առկա խնդիրները՝ կա անհրաժեշտություն օրենքում որոշակի լրացումներ կատարելու՝ կապված պետական լիազոր մարմինների, վերահսկողության կառուցակարգերի, խաղողի գնագոյացման և մթերման գործընթացների կազմակերպման հետ: Փոփոխությունների անհրաժեշտություն կա նաև «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում, քանի որ կոնյակի արտադրության համար սահմանված պետական տուրքը առաջացնում է ռիսկեր կապված նոր տնտեսավարողների ոլորտ մուտք գործելու հետ, ինչն էլ հնարավոր բացասական հետևանքներ է ունենում ոլորտում մրցակցային իրավիճակի վրա:

Արմավիրի մարզում խաղողագործության ճյուղի վիճակի ուսումնասիրության նպատակով խաղողագործական տնտեսություններ շրջանում իրականացվել են ընտրանքային հարցումներ, որի միջոցով բացահայտել են այդ տնտեսությունների ներտնտեսային, արտադրատնտեսական առանձնահատկությունները, գործունեության հետ կապված առկա հիմնախնդիրները, խաղողագործների վերաբերմունքը խաղողագործությամբ զբաղվելու նկատմամբ և այլն: Հարցումների համար անհրաժեշտ ընտրանքի մեծությունը որոշելու համար որպես գլխավոր համակցություն ընդունվել է Արմավիրի մարզում խաղողագործական տնտեսությունների թիվը՝ բացառությամբ մինչև 0,1 հա մեծությամբ տնամերձ հողամասերում խաղող մշակող տնտեսությունների (նշված տնտեսությունների բացառվել են հարցման առավել արժանահավատ արդյունքներ ստանալու նպատակով): Գլխավոր համակցությունը կազմել է 5781 տնտեսություն, որի պարագայում 95% վստահելիությամբ, ներկայացուցչական ընտրանք ապահովելու համար պետք է իրականացնել 361 հարցում⁴: Այս թիվը հիմք ընդունելով՝ կատարվել են 365 հարցումներ՝ պատահական ընտրանքի եղանակով: Հարցումներում ներառվել են և՛ Արմավիրի, և՛ Էջմիածնի, և՛ Բաղրամյանի շրջանի տարբեր գյուղական բնակավայրերի խաղողագործական տնտեսություններ՝ հարցումների հավաստիության հնարավորինս բարձր մակարդակ ապահովելու նպատակով:

Ատենախոսության երրորդ՝ «**խաղողագինեգործական համալիրի զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները ՀՀ Արմավիրի մարզում**» գլխում ուսումնասիրվել է համալիրի ճյուղերի արտաքին տնտեսական գործունեության առանձնահատկությունները, կատարվել է համալիրի քանակական գնահատում՝ տնտեսամաթեմատիկական մոդելավորման և էկոնոմետրիկ մեթոդների կիրառմամբ և ստացված արդյունքների համադրմամբ մշակվել են համալիրում առկա հիմնախնդիրների լուծմանն ուղղված առաջարկություններ: ՀՀ Արմավիրի մարզի խաղողագինեգործական համալիրի կարևորագույն

⁴ Հարցումների համար անհրաժեշտ ընտրանքի մեծությունը որոշվել է Sample Size Calculator-ի միջոցով, էլ. հղումը՝ <https://www.calculator.net/sample-size-calculator.html?type=1&cl=99&ci=5&pp=50&ps=5781&x=68&y=1>

առանձնահատկություններից մեկը վերջինիս բարձր զգայնությունն է արտահանման նկատմամբ: Համալիրի վերջնական արտադրանք հանդիսացող թարմ խաղողի, չամիչի, ալկոհոլային խմիչքների իրացման կառուցվածքում հիմնական մասը կազմում է արտահանումը, քանի որ ներքին շուկան սահմանափակ է, և ներքին սպառման ավելացման ներուժը փոքր է: Թե՛ խաղողի և թե՛ դրա վերամշակումից ստացվող խմիչքների արտահանման հիմնական ուղղությունը հանդիսանում է ՌԴ-ն, ու չնայած վերջին տարիներին արտահանման կառուցվածքում դիտվել են դրական տեղաշարժեր և ավելացել է արտահանման այլ ուղղությունների տեսակարար կշիռը, այնուամենայնիվ արտահանման ուղղությունների դիվերսիֆիկացիայի խորացումը մեր գնահատմամբ հանդիսանում է առաջնահերթություն՝ հատկապես 2022 թվականին սկսված ռուս-ուկրաինական հակամարտության և դրա տնտեսական հետևանքների համատեքստում: Խմբավորելով խաղողագինեգործական համալիրի արտադրանքների արտահանման հետ կապված մարտահրավերները՝ մեր կողմից առանձնացվել են ռիսկերի հետևյալ հիմնական խմբերը.

- Արտարժույթի փոխարժեքի տատանումների հետ կապված ռիսկեր,
- Արտահանման ծավալների պոտենցիալ կրճատման ռիսկեր,
- Արտադրության ծավալների հնարավոր կրճատման ռիսկեր՝ պայմանավորված արտահանման խնդիրներով և արտահանողների եկամուտների նվազմամբ,
- Միջազգային վճարահաշվարկային համակարգի հետ կապված ռիսկեր,
- Լոգիստիկ գործընթացներում առաջացող ռիսկեր՝ կապված ապահովագրական պրոդուկտների բացակայության, համակարգի անկատարության, սահմանահատման և այլ խնդիրների հետ:

« Հաղողագործության ճյուղի զարգացման դինամիկայի վրա տարբեր գործոնների ազդեցության գնահատման նպատակով իրականացվել է կոռելյացիոն-ռեգրեսիոն վերլուծություն: Իսկ « Արմավիրի մարզի խաղողագործական տնտեսությունների գործունեության արդյունավետության գնահատման և գործունեության իրականացման արդյունավետ տարբերակների որոշման համար կիրառվել է երկփուլանի քանակական գնահատում հետևյալ մեթոդաբանությամբ.

- Նախ՝ Արմավիրի մարզի հետազոտված 365 տնտեսությունների համար DEA (Data Envelopment Analysis) մեթոդի միջոցով հաշվարկվել են արդյունավետության գործակիցները (θ),
- Այնուհետև կիրառվել է Տոբիթ ռեգրեսիոն մոդելավորում, որի միջոցով գնահատվել է DEA-ի միջոցով հաշվարկված արդյունավետության գործակիցների վրա տարբեր գործոնների ազդեցության բնույթը:

DEA մեթոդի միջոցով հաշվարկված արդյունավետության գործակցի տնտեսագիտական բովանդակությունը կայանում է նրանում, որ որքան հաշվարկված արդյունավետության գործակցի արժեքը մոտ լինի մեկին, այնքան տնտեսությունը արդյունավետ է գործում, իսկ արդյունավետ են համարվում այն տնտեսությունները, որոնք, գործունեության իրականացման ընթացքում կիրառելով ամենացածր ծախսերի համակցություն, ապահովում են առավելագույն արդյունք:

DEA մոդելավորման նպատակային ֆունկցիան բնութագրվում է հետևյալ կերպ. Յուրաքանչյուր j -րդ դիտարկված տնտեսության համար x_j -ն կարտահայտի ծախսային ցուցանիշները, իսկ y_j -ն արդյունքային ցուցանիշները, որոնցից ձևավորվում են ծախսերի (X) և արդյունքների (Y) մատրիցաները: λ -ն ոչ բացասական վեկտոր է, որը ձևավորում է j տնտեսության գծային համակցությունները: Ծախսաուղղորդված DEA մոդելը նպատակ ունի նվազագույնի հասցնելու ծախսային ցուցանիշները առկա արտադրական հնարավորությունների սահմաններում, այսինքն ապահովել արդյունքային ցուցանիշների տրված մեծությունը՝ ծախսային ցուցանիշների նվազագույն մակարդակներով: DEA մոդելի նպատակային ֆունկցիան կունենա հետևյալ տեսքը. Նվազագույնի հասցնել β_j .

$$\begin{aligned} -Y_j + Y\lambda &\geq 0 \\ \beta X_j - X\lambda &\geq 0 \\ M1\lambda &= 1 \\ \gamma &\geq 0 \\ \beta &\in (0,1) \end{aligned}$$

DEA մոդելավորումից հետո Տոբիթ ռեգրեսիոն մոդելավորման միջոցով գնահատվել է արդյունավետության գործակցի վրա տարբեր գործոնների ազդեցության բնույթը և այդ ազդեցության վիճակագրական նշանակալիությունը: Տոբիթ ռեգրեսիոն մոդելավորումը, որը հաճախ անվանվում է նաև ցենզուրավորված ռեգրեսիոն մոդելավորում, կիրառվում է այն իրավիճակներում, երբ գնահատվում են այնպիսի փոփոխականների գծային փոխկապվածությունները, որոնց արժեքները ունեն վերին կամ ստորին շեմ: Այն հետազոտության Տոբիթ մոդելի մաթեմատիկական տեսքը կլինի հետևյալը.

$$\theta_j = \alpha + X_j\beta + \varepsilon_j, \quad j=1,2,\dots, N \quad (3):$$

Որտեղ՝

θ_j -ն DEA մոդելավորմամբ ստացված արդյունավետության գործակիցն է j -րդ տնտեսության համար,

X_j -ն անկախ կամ բացատրող փոփոխականների մատրիցան է,

β -ն հաշվարկված ռեգրեսիոն գործակիցների վեկտորն է,

ε_j -ն պատահական սխալի մեծությունն է:

Կատարված քանակական գնահատումները հանգեցրել են հետևյալ երկու հիմնաբարային եզրահանգումներին.

1. Խաղողագործության ճյուղի զարգացման դինամիկան պայմանավորող հիմնական գործոնը խաղողի իրացման միջին գինն է, հետևաբար ճյուղի զարգացման տեմպերի հետագա կայունացման հարցում առաջնային նշանակություն է ստանում խաղողի գնագոյացման կառուցակարգերի կատարելագործման անհրաժեշտությունը: Խաղողագործության զարգացման վրա խաղողի իրացման միջին գների ազդեցությունը որոշելու նպատակով մշակվել են հետևյալ երկու էկոնոմետրիկ մոդելները (Աղյուսակ 1).

- Առաջին մոդելը բնութագրում է գնի ազդեցությունը խաղողի համախառն բերքի ցուցանիշի վրա.

$$y_{1t} = 944.34 + 1256.596x_{t-3} (1)^5,$$

- Երկրորդ մոդելը բնութագրում է գնի ազդեցությունը այգետարածքների ցուցանիշի վրա.

$$y_{2t} = 11192.108 + 30.207x_{t-2} (2)^6:$$

Աղյուսակ 1.

Ռեգրեսիոն մոդելավորման արդյունքները⁷

		Ռեգրեսիոն գործակիցը		Կոռելյացիայի գործակիցը	t վիճակագիրը	Նշանակալիությունը
		b	Ստանդարտ շեղումը	B		
1-ին մոդել	c	944.340	43518.302		.022	.983
	x_{1t-3}	1256.596	268.598	.741	4.678	.000
2-րդ մոդել	c	11192.108	920.744		12.156	.000
	x_{1t-2}	30.207	5.614	.785	5.381	.000

2. Խաղողագործական տնտեսություններում առավելագույն գործունեության արդյունավետություն ապահովում են 5 հա և ավելի չափեր ունեցող տնտեսությունները, հետևաբար ՀՀ Արմավիրի մարզի համար խաղողագործական տնտեսությունների համար օպտիմալ չափ կարելի է ընդունել 5 հա և ավելի տարածությունները (Աղյուսակ 2):

Աղյուսակ 2.

Տրիբո ռեգրեսիոն մոդելավորման արդյունքները⁸

	Ռեգրեսիոն գործակիցը		Z վիճակագիրը	Նշանակալիությունը
	b	Ստանդարտ շեղումը		
C	0.511994	0	5.361216	0.000
X_1 - Խաղողագործի սեռը	0.060192	0.029827	2.018034	0.0436
X_2 - Խաղողագործի փարիքը	0.002463	0.000781	3.154611	0.0016
X_4 - Այգու չափերը	0.006180	0.003042	2.031772	0.0422
X_5 - Մշակվող խաղողի տրոփը	-0.16288	0.039532	-4.120181	0.000
X_7 - Խաղողի իրացման գինը	0.001103	0.000430	2.5664933	0.0103

⁵ Բանաձևը կազմվել է հեղինակի կողմից:

⁶ Բանաձևը կազմվել է հեղինակի կողմից:

⁷ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից:

⁸ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից:

«Արմավիրի մարզի խաղողագինեգործական համալիրի զարգացման հայեցակարգային մոտեցումների մշակումը նախ և առաջ իրենից ենթադրում է առկա հիմնախնդիրների հստակ սահմանում և դրանց հասցեական լուծումների մշակում: Ատենախոսության շրջանակներում կատարված էկոնոմետրիկ վերլուծությունների, տնտեսամաթեմատիկական մոդելավորման, ընտրանքային հարցումների, վիճակագրական ցուցանիշների դինամիկայի վերլուծության և ոլորտում իրականացվող պետական քաղաքականության ու օրենսդրաիրավական կարգավորման գնահատման հիման վրա բացահայտվել են Արմավիրի մարզի խաղողագինեգործական համալիրի հետևյալ հիմնահարցերը⁹.

- Խաղողի իրացման ցածր գները,
- Խաղողի իրացման (մթերման) դժվարությունները,
- Խաղողի արտադրության ծախսերի ավելացման միտումները՝ ագրոնեդրանքի գների ինդեքսի բարձր մակարդակով պայմանավորված, ինչը բերում է խաղողի ինքնարժեքի բարձրացմանը,
- Խաղողագործական տնտեսությունների փոքր չափերը, ինչը բացասաբար է անդրադառնում այդ տնտեսությունների գործունեության արդյունավետության վրա,
- Ոլորտը կարգավորող օրենսդրաիրավական դաշտում փոփոխությունների և լրացումների անհրաժեշտությունը, ինչպես նաև այդ օրենսդրաիրավական ակտերի կիրարկման վերահսկողական մեխանիզմների անկատարությունը,
- Կոնյակի շրջանառության ոլորտում գերիշխող դիրք ունեցող կազմակերպությունների առկայությունը և շուկայի կենտրոնացվածության բարձր մակարդակը, ինչպես նաև ոլորտում մրցակցության խթանման անհրաժեշտությունը,
- Մարտահրավերները՝ կապված արտաքին տնտեսական շուկերի և արտահանման խնդիրների հետ:

Ատենախոսության շրջանակներում կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում կատարվել են հետևյալ **եզրակացությունները**.

1. Խաղողագործության արդյունքային ցուցանիշների վերլուծության ժամանակ պարզ է դարձել, որ համախառն բերքի և միջին բերքատվության ցուցանիշները ունեն աճի միտում, իսկ խաղողի այգետարածքների ցուցանիշը, ընդհակառակը՝ նվազման միտում: Խաղողագործական տնտեսությունների հիմնական մասի չափերը չի գերազանցում 1,0 հեկտարը, իսկ խաղողի այգիների տարածքների միջին չափը 0,31 հա է: Մարզում խաղողագործների շրջանում կատարված հարցումների արդյունքում պարզ է դարձել, որ 2021 թվականից սկսած խաղողի այգետարածքները սկսել են կրճատվել՝ այգիների մասսայական քանդման պատճառով: Իրավիճակի հիմնական պատճառը խաղողի իրացման ցածր գինն է, իրացման դժվարությունները և որոշ դեպքերում անգամ իրացման անհնարինությունը: Ըստ կատարված հարցումների արդյունքների՝ մարզում

⁹ Aleksanyan V., Asatryan H., Development issues of the viticulture complex and the main directions of their solution in the RA Armavir region, Alternative Quarterly Academic Journal/ Economy & Management, 2023, №2, Yerevan, pp. 128-136.

խաղողագործական տնտեսությունների գործունեությանը վնաս հասցնող հիմնական բնական աղետներն են կարկուտը, վաղ գարնանային ցրտահարությունները և երաշտը: Հարցմանը մասնակցած տնտեսություններում խաղողի միջին բերքատվությունը կազմել է 26,3 տ/հա՝ սեղանի սորտերի դեպքում, և 20,15 տ/հա՝ տեխնիկական սորտերի դեպքում: Մեկ կիլոգրամ խաղողի ինքնարժեքը տատանվել է 138-172 դրամի սահմաններում, իսկ իրացման գինը 123-168 դրամի սահմաններում՝ կախված խաղողի սորտից¹⁰:

2. ՀՀ գինեգործության ճյուղի համակողմանի ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ ճյուղը ունի կայուն զարգացման միտում՝ վերջին տասնամյակի կտրվածքով աճում են և՛ արտադրության ծավալները, և՛ արտահանման ծավալները: Խաղողի գինու արտահանման հիմնական ուղղություններ են հանդիսանում ՌԴ-ն և ԱՄՆ-ն: Գինեգործությամբ զբաղվող կազմակերպությունների և դրանցում զբաղվածների թիվը աճել է, ճյուղը նպաստում է ընդհանուր ՀՀ տնտեսական ակտիվության բարձրացմանը:

Ինչպես գինեգործության, այնպես էլ կոնյակագործության ճյուղում վերջին տարիներին դիտվում է կայուն աճի միտում: Կոնյակի արտադրության և արտահանման ծավալները աճում են՝ վերջին տասնամյակում գրանցվել է այդ ծավալների եռապատիկ աճ, ընդ որում ճյուղի վերջնական արտադրանքի ավելի քան 60%-ը արտահանվում է: Արտահանման կառուցվածքում ամենամեծ տեսակարար կշիռն ունի ՌԴ-ն՝ 70-80%, ինչը մեր գնահատմամբ պահանջում է արտահանման ռիսկերի դիվերսիֆիկացիա կոնյակագործության ճյուղը հնարավոր տնտեսական շուկերի բացասական ազդեցությունից պաշտպանելու նպատակով: Աճել են կոնյակագործությամբ զբաղվող կազմակերպությունների թիվը և դրանցում զբաղվածների թվաքանակը: Կոնյակի շրջանառության ոլորտում առկա է բարձր շուկայական կենտրոնացվածության մակարդակ, և գործում են գերիշխող դիրք ունեցող տնտեսավարողներ, ինչը բացասաբար է անդրադառնում շուկայի մրցակցային իրադրության վրա: Այդ բացասական ազդեցությունը տարածվում է խաղողի մթերման գործընթացի վրա, քանի որ շուկայում մեծ մասնաբաժին ունեցող կազմակերպությունները իրենց կամքն են թելադրում և սահմանում են մթերման իրենց պայմանները: Շուկայում մրցակցության անկատարության հետևանքով կոնյակագործությամբ զբաղվող մյուս տնտեսավարողները չեն կարողանում ազդել իրացման գնի և պայմանների վրա՝ հարմարվելով գերիշխող դիրք ունեցող կազմակերպությունների կողմից ստեղծված իրավիճակին: Բացի այդ մեր կողմից կատարված դիտարկումների արդյունքում պարզել ենք, որ առկա են մեծ ռիսկեր՝ կապված կոնյակ արտադրող կազմակերպությունների կողմից ներմուծված սպիրտների հումքով կոնյակի արտադրության հետ, ինչը կոպիտ խախտում է և բացասաբար է անդրադառնում շուկայում մրցակցային իրավիճակի վրա, խախտում է սպառողների շահերը և այլն: Կոնյակի շրջանառության ոլորտում մրցակցային

¹⁰ Asatryan H., Assessment of the viticulture state, challenges and its development potential in the Armavir region using sample surveys, Problems of competitive education and science in a changing world/international conference collection of scientific articles, - Yerevan, 2023, pp. 168-183.

իրադրության բարելավված և ոլորտի կազմակերպությունների միջև հավասար մրցակցային պայմաններ ապահովելու համար առաջարկվում է.

➤ նվազեցնել կոնյակի արտադրության և իրացման պետական տուրքի չափը՝ նախկին տարեկան բազային տուրքի 10000-ապատիկի փոխարեն արտադրության համար սահմանել 50-ապատիկը, իսկ իրացման համար պետական տուրքի չափի որոշումը սահմանել՝ ելնելով վաճառքի ծավալներից՝ յուրաքանչյուր լիտրի կամ շշի հաշվով: Ամենապարզ հաշվարկներով եթե ընդունենք, որ 1 կգ տեխնիկական խաղողի իրացման միջին գինը ենթադրենք 150 դրամ է, ապա սահմանված 10 մլն դրամ պետական տուրքի գումարով կոնյակ արտադրող կազմակերպությունը կկարողանա մթերել մոտավորապես 66,7 տոննա խաղող, որը ստացվում է միջինում 3 հա խաղողի այգետարածքից, և, եթե հաշվի առնենք, որ խաղողագործական տնտեսությունների միջին չափը ՀՀ-ում 0,5 հա է, ապա վեց խաղողագործական տնտեսության համար խաղողի իրացման հարցը լուծվում է: Առաջարկվող մոտեցման կիրառումը բարենպաստ պայմաններ է ստեղծում նոր տնտեսավարողների կոնյակի արտադրության և իրացման ոլորտ մուտք գործելու համար:

➤ Առաջարկվում է գործող պետական աջակցության ծրագրերում ավելացնել ևս մեկը՝ «խաղողի հումքով ոգելից խմիչքների արտադրությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների աջակցություն» անվանմամբ, որի շրջանակներում պետության կողմից տրամադրվելու է ֆինանսական աջակցություն ոլորտի տնտեսավարողներին՝ վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման կամ ծախսերի մասնակի փոխհատուցման եղանակներով, ընդ որում աջակցությունը իրականացվելու է երկու բաղադրիչով: Առաջին բաղադրիչը կուղղվի արդեն գործող տնտեսավարողներին, իսկ երկրորդը՝ նորաստեղծ վերամշակողներին: Այս ծրագիրը պետք է ոչ միայն միտված լինի ոլորտի աշխուժացմանը՝ նոր տնտեսավարողների մուտքը խթանելով, այլ նաև գործող կազմակերպություններին՝ առավելագույնս օգտագործելու դրանց արտադրական հզորություններն ու ներուժը: Աջակցության միջոցառումները ցանկալի է տարբերակված մոտեցմամբ կիրառել հատկապես բարեխիղճ վերամշակողների նկատմամբ՝ հաշվի առնելով այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են տվյալ կազմակերպության կողմից նորագույն տեխնոլոգիաների ու ինովացիաների կիրառումը, շրջակա միջավայրի պաշտպանությունը, շրջանաձև տնտեսության կառուցակարգերի ներդրումը, երկրորդային ռեսուրսների մշակումը, բնակչության անապահով խմբերին աշխատուժում ընդգրկելը:

Վերոնշյալ կառուցակարգերն ուղղված են գինեգործության և կոնյակագործության ոլորտում մրցակցության խթանմանը, նոր տնտեսավարողների մուտք գործելուն և նրանց գործունեության համար նպաստավոր պայմաններ ստեղծելուն: Այս միջոցառումները կարող են նպաստել մեծ տնտեսություններ

ունեցող խաղողագործներին, ինչպես սեփական, այնպես էլ այլ խաղողագործների հումքը գնելուն և վերամշակելուն:

3. Մեր գնահատմամբ, խաղողագինեգործական համալիրի օրենսդրաիրավական կարգավորման մասով առկա է օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին հրամայականը: Ներկայիս գործող օրենքը բազմակողմանիորեն անդրադառնում է ոլորտի կարգավորման տարբեր հարցերին, սակայն կա որոշ հստակեցումների կարիք՝ կապված պետական լիազոր մարմինների, վերահսկողության կառուցակարգերի, խաղողի գնագոյացման և մթերման գործընթացների կազմակերպման մասով: Այս համատեքստում առաջարկվում է «Խաղողի հումքով ոգելից խմիչքների մասին» ՀՀ օրենքում կատարել լրացումներ այնպիսի դրույթներով, որոնք հստակ կսահմանեն օրենքի կիրարկումն ապահովող պետական լիազոր մարմինների շրջանակը: Բացի այդ խաղողագինեգործական համալիրի պետական կարգավորման վերահսկողական մեխանիզմների բարելավման նպատակով առաջարկվում է Խաղողագործության և գինեգործության հիմնադրամի լիազորությունների շրջանակը ավելացնել և դրա հիմքի վրա ստեղծել նոր, պետական տեսչական մարմին: Առաջարկվում է այդ մարմինը անվանակոչել «ՀՀ գինու և կոնյակի» տեսչական մարմին, որի հիմնական նպատակն ու խնդիրը պետք է լինի գինեգործության և կոնյակագործության ոլորտների պետական կարգավորումը, ինչը կիրականացնի հետևյալ հիմնական գործառույթները¹¹.

- Խաղողագործների շահերի պաշտպանության նպատակով վերամշակող կազմակերպությունների գործունեության վերահսկողություն,
- Վերամշակող կազմակերպությունների կողմից Աշխարհագրական նշումով գինիների, Հայկական կոնյակի, կոնյակի սպիրտի արտադրության տեխնոլոգիական գործընթացների վերահսկողության իրականացում,
- Խաղողագործության, կոնյակագործության և գինեգործության ճյուղերի մշտադիտարկում, առկա խնդիրների վեր հանում և դրանց լուծմանն ուղղված միջոցառումների մշակում,
- Վերահսկողություն վերամշակողների կողմից խաղողի մթերման գործընթացի նկատմամբ, որպեսզի պահպանվեն օրենքով նախատեսված գնագոյացման մեխանիզմները և մյուս պահանջները,
- Իր գործունեության շրջանակներում հստակ ամրագրվեն Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի և Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի հետ համագործակցային կառուցակարգերը:

4. ՀՀ Արմավիրի մարզի խաղողագինեգործական համալիրի տնտեսավարողների գործունեության վրա արտաքին տնտեսական շուկերի բացասական ազդեցությունը նվազեցնելու և արտահանողների հնարավոր ֆինանսական դժվարությունները մեղմելու նպատակով առաջարկվում է, որ ՀՀ Կառավարության և «Հայաստանի արտահանման ապահովագրական

¹¹ Aleksanyan V., Asatryan H., The analysis of state agrarian policy, support programs, laws and legislative acts rgulating viticulture in RA: existing problems and their solutions, Agriscience and Technology/Armenian National Agrarian University, N2 (62)/2023, Yerevan, pp. 135-140, doi: 10.52276/25792822-2023.2-135.

գործակալություն» ԱՓԲԸ-ի համատեղ ուժերով մշակել և ներդնել արտահանման լոգիստիկ գործընթացներում ծագող խնդիրների «պարտադիր» ապահովագրության համակարգ: Կարևոր է նաև ոլորտի արտահանողների իրավիճակային ու օպերատիվ աջակցությունը՝ վարկավորման սեզոնային աջակցության կամ «Վարկային արձակուրդների» տրամադրման ճանապարհով: Մեր գնահատմամբ իրատեսական է նաև նման իրավիճակներում ոլորտի տնտեսավարողներին հարկային արտոնությունների տրամադրումը, օրինակ շահութահարկի դրույքաչափերի ժամանակավոր նվազեցումը: ՀՀ Կառավարության կողմից նման ճկուն գործիքակազմերի կիրառումը թույլ կտա ոլորտի կազմակերպություններին հնարավորինս շրջանցել արտաքին տնտեսական շոկերը և իրականացնել բնականոն արտադրատնտեսական գործունեություն՝ առանց թողարկման ծավալների կրճատման, կամ ֆինանսական կորուստների:

5. Խաղողագինեգործական համալիրի կոռեկցիոն-ռեգրեսիոն վերլուծության արդյունքները փաստում են, որ խաղողի համախառն բերքի և այգետարածքների վրա ամենամեծ ազդեցություն ունեցող գործոնը իրացման գներն են¹²: Գին գործոնի և խաղողագործության արդյունքային ցուցանիշների միջև գործում է դրական, ուժեղ կոռեկցիոն կապ: Հաշվի առնելով խաղողի իրացման գների ազդեցության բնույթը ՀՀ խաղողագործության ճյուղի զարգացման դինամիկայի վրա, ինչպես նաև խաղողի գնագոյացման հետ կապված խնդիրները՝ առաջարկվում է խաղողի գնագոյացման հիմքում դնել վերջինիս որակական ցուցանիշ հանդիսացող շաքարայնությունը և այդ կարգավորմանը տալ իրավական ուժ՝ ներառելով գնագոյացման մեխանիզմը «խաղողի հումքով ոգելից խմիչքների մասին» ՀՀ օրենքում: Խաղողի գինիների, կոնյակի, կոնյակի սպիրտի և այլ՝ խաղողի վերամշակումից ստացվող ալկոհոլային խմիչքների, արտադրության տեխնոլոգիական պահանջները հաշվի առնելով՝ առաջարկվում է ըստ խաղողի սորտերի սահմանել շաքարայնության նվազագույն շեմ և մթերման պրոցեսի ժամանակ շաքարի յուրաքանչյուր լրացուցիչ տոկոսային կետի համար խաղողի գինը բարձրացնել 10 դրամով և հակառակը՝ պահանջվող շաքարայնությունը չապահովելու դեպքում գինը նվազեցնել համապատասխան չափով: Նման մոտեցումը հավասար պայմաններ է ստեղծում և՛ խաղողագործների, և՛ վերամշակողների համար:


6. Արմավիրի մարզի խաղողագործական տնտեսությունների գործունեության արդյունավետության գործակիցների հաշվարկման միջոցով բացահայտվել են տնտեսությունների գործունեության կառավարման և կազմակերպման այն առանձնահատկությունները, որոնց պարագայում գրանցվում է առավելագույն արդյունավետություն: Արդյունավետության գործակիցների վերլուծությունների արդյունքները ցույց են տալիս, որ արդյունավետության առավելագույն՝ 1 միավոր գրանցել են 26 տնտեսություններ, արդյունավետության նվազագույն արժեքը

¹² Asatryan H., The nature of correlation between production factors and viticulture development of Armenia, The Contemporary Issues of Socioeconomic Development in the RA, Scientific journal of articles, 2022, №1, Yerevan, 2022, pp. 235-251.

Asatryan H., et al., Dynamics of the Development of Viticulture in RA: The Econometric Case Study, Statistical Journal of the IAOS, vol. 38, no. 4, pp. 1461-1471, 2022. DOI: 10.3233/SJI-220948

կազմել է 0,22, միջին արժեքը հետազոտված 365 տնտեսությունների կտրվածքով կազմել է 0,72, ինչը նշանակում է, որ ՀՀ Արմավիրի մարզի խաղողագործական տնտեսությունները իրենց կառավարման պրակտիկայի բարելավման արդյունքում միջինում կարող են բարելավել իրենց գործունեության արդյունավետությունը 28 տոկոսային կետով: Ըստ տնտեսությունների չափերի արդյունավետության գործակցի վերլուծության՝ ամենամեծ արժեքը՝ 0,96, գրանցվել է 5,0-10,0հա չափեր ունեցող տնտեսություններում, 10 հեկտարից ավելի չափեր ունեցող տնտեսություններում գործակցի միջին արժեքը կազմել է 0,94, իսկ արդյունավետության գործակցի ամենափոքր միջին արժեքը գրանցվել է 0,5-1,0 հեկտար չափեր ունեցող տնտեսություններում: Արդյունավետության գործակցիցների վերլուծությունը ըստ տնտեսությունների չափերի բերում է այն եզրահանգման, որ մեծ չափեր ունեցող տնտեսությունները խաղողագործության մեջ ավելի արդյունավետ են: Տոբիթ մոդելավորման միջոցով արդյունավետության գործակցիցների վրա տարբեր գործոնների ազդեցության գնահատման արդյունքում պարզ է դարձել, որ ամենաարդյունավետ տնտեսությունները այն տնտեսություններն են, որոնք ունեն մեծ չափեր, ղեկավարվում են մեծ տարիք ու խաղողի մշակության երկարամյա փորձ ունեցող խաղողագործի կողմից և մշակում են խաղողի սեղանի սորտեր: Իսկ խաղողի իրացման գնի բարձրացումը նշանակալի ու դրական է ազդում տնտեսությունների արդյունավետության բարձրացման վրա (Աղյուսակ 2): Հաշվի առնելով այս հանգամանքները՝ մեր կողմից առաջարկվում է կիրառել կատարված մոդելավորման արդյունքները որպես գիտական հիմնավորում պետական կառավարման մարմինների կողմից ոլորտի զարգացման քաղաքականությունների և ռազմավարությունների մշակման համար, ինչպես նաև օգտագործվի բանկային ու վարկային կազմակերպությունների կողմից, ներդրողների կողմից և այլն: Խաղողագործական տնտեսություններում կառավարչական-կազմակերպական գործընթացների արդյունավետության բարձրացման նպատակով առաջարկվում է հրաժարվել խաղողի վազերի այգեթաղից և փոխարենը օգտագործել վազերի ցրտադիմացկունությունը բարձրացնող պատրաստուկներ, որոնց կիրառման դեպքում հնարավոր է կրճատել խաղողի ինքնարժեքը միջինում 11 դրամով՝ այսպիսով այլ հավասար պայմաններում բարձրացնելով կառավարման արդյունավետությունը խաղողագործական տնտեսությունում: Բացի այդ խաղողագործական տնտեսությունների փոքր չափերի խնդրի լուծման տեսանկյունից առաջարկվում է փոփոխություն կատարել արդեն գոյություն ունեցող «ՀՀ-ում ինտենսիվ այգեգործության զարգացման, արդիական տեխնոլոգիաների ներդրման և ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության 2021-2023 թվականների» ծրագրում: Մասնավորապես խաղողի մասով բարձրացնել հողատարածքի նվազագույն շեմը՝ 0,5 հա փոխարեն սահմանելով 5 հա և իրականացնել վարկային տոկոսադրույքի ամբողջական ոչ թե մասնակի սուբսիդավորում: Բացի այդ լրացումներ կատարել նաև հարկային օրենսգրքում, մասնավորապես 5 հա և ավելի չափեր ունեցող նորատունկ խաղողի այգի ունեցող խաղողագործներին ազատել հողի հարկից՝ հողի հարկից ազատման գործող 3 տարին երկարաձգելով 6 տարվա: Առաջարկվող

մոտեցումները խաղողագործությունը ավելի գրավիչ կդարձնեն ներդրողների համար և զուգահեռ կնպաստեն հողերի խոշորացմանը և ավելի մեծ այգետարածքների հիմնմանը:



Գծապատկեր 3. ՀՀ Արմավիրի մարզի խաղողագինեգործական կլաստերի սխեման¹³

7. Ատենախոսության շրջանակներում կատարված ուսումնասիրությունները և վերլուծությունները բերում են այն եզրահանգման, որ ՀՀ Արմավիրի մարզի խաղողագինեգործական համալիրի զարգացման առանցքային ուղղությունը մարզում խաղողագինեգործական կլաստերի ձևավորումը և կլաստերի ստեղծման համատեքստում առաջադրված հայեցակարգային մոտեցումների համալիր ներդրումն ու կիրառումն է (Գծապատկեր 3): Կլաստերի զարգացումը մարզում ոչ միայն կբերի ոլորտի զարգացման տեմպերի կայունացմանը, այլև բազմադիվ էֆեկտով դրական ազդեցություն կունենա մարզի ընդհանուր տնտեսական զարգացման և աշխատատեղերի ավելացման վրա:

¹³ Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից:

Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. **Asatryan H., Aleksanyan V., Azatyan L., Manucharyan M.**, Dynamics of the development of viticulture in RA: The econometric case study, Statistical Journal of the IAOS, 38(4), 2022, pp. 1461-1471, <https://content.iospress.com/articles/statistical-journal-of-the-iaos/sii220948> , <http://dx.doi.org/10.3233/SJI-220948>:

2. **Asatryan H.**, The nature of correlation between production factors and viticulture development of Armenia, «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում», Գիտական հոդվածների ժողովածու - 2022, Nո1, Երևան, էջ 235-251, <https://economics.sci.am/wp-content/uploads/2022/11/Gitazhoghov-2022-tparan-.pdf>:

3. **Asatryan H.**, Assessment of the viticulture state, challenges and its development potential in the Armavir region using sample surveys, «Մրցունակ կրթության և գիտության հիմնախնդիրները հարափոփոխ Մ 958 աշխարհում» Գիտական հոդվածների ժողովածու: Միջազգային գիտաժողովի նյութեր, հունիսի 21, 2023.- Եր.: «Տիր» հրատ., 2023 էջ 168-183, ISBN 978-9939-9303-4-3, https://www.isec.am/images/gitakan_hraparakumner/-Gitajoxov_2023.pdf:

4. **Aleksanyan V., Asatryan H.**, The analysis of the state agrarian policy, support programs, laws and legislative acts regulating viticulture in RA: existing problems and their solutions, «Ազրոգիտություն և տեխնոլոգիա» գիտական պարբերական, N 2 (82)/2023, Երևան, 2023թ., էջ 135-140, https://library.anau.am/images/stories/grqer/agro-tex/2023-2/aleksanyan_asatryan.pdf, doi: 10.52276/25792822-2023.2-135:

5. **Aleksanyan V., Asatryan H.**, Development issues of the viticulture complex and the main directions of their solution in the RA Armavir region, «Այլընտրանք գիտական հանդես #2». – Երևան, 2023, էջ 128-136:

6. **Казарян Э.С., Алексанян В.С., Асатрян О.С.**, Количественная оценка влияния экспорта и валютных курсов на развитие коньячной промышленности РА, Евразийская экономическая интеграция и устойчивое развитие в условиях глобальных преобразований / Сборник статей международной научно-практической конференции под ред. Э.С. Казаряна, Х.А. Константиныди, В.В. Сорокожердьева. – Краснодар: Просвещение-Юг, 2023. – с. 47-51. ISBN 978-5-906724-83-0

АСАТРЯН ОГАННЕС СИМОНОВИЧ

**ВОПРОСЫ РАЗВИТИЯ ВИНОГРАДАРСКОГО КОМПЛЕКСА В АРМАВИРСКОЙ
ОБЛАСТИ РА**

Диссертация представлена на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 – “Экономика и управление народным хозяйством и его отраслями”.

Защита диссертации состоится 14-го декабря 2023 года в 14:00 часов на заседании Специализированного совета по экономике 015 ВАК Республики Армения, действующего в Ереванском государственном университете, по адресу: 0025, ул. Абовяна, 52, г. Ереван, РА.

Р Е З Ю М Е

Виноградарство является одним из старейших отраслей экономики РА. Это относительно трудоемкая отрасль сельскохозяйственного производства, благодаря чему обеспечивается высокий уровень занятости населения в сельской местности. Кроме того, деятельность таких жизненно важных для народного хозяйства отраслей, как виноделие и коньячное производство, во многом определяется состоянием виноградарства. По существу, виноградарство, коньячное производство, виноделие следует рассматривать в контексте одной общей системы — виноградарского комплекса, поскольку эти отрасли экономики тесно связаны друг с другом и являются важнейшими звеньями в цепочке создания стоимости алкогольных напитков, изготовленных из виноград.

После многолетнего кризиса в виноградарском комплексе РА в последние годы наблюдается определенный рост и развитие, и для сохранения этих тенденций очень важно своевременно выявить новые проблемы и препятствия, стоящие перед отраслью, и найти пути их решения. Необходимость многогранного и актуального исследования перспектив развития виноградарского комплекса определяется такими явлениями в мировой экономике, как новые постковидные экономические реалии, российско-украинский конфликт и его экономические последствия. Актуальность темы диссертации обусловлена важным экономическим, социальным и демографическим значением виноградарского комплекса Армавирской области РА.

Основная цель диссертации – всестороннее выявление проблем перспективного развития виноградарского комплекса Армавирской области

Республики Армения и предложение путей их решения. В контексте реализации указанной цели в диссертации были намечены **следующие задачи**:

- изучить состояние и тенденции развития виноградарской, коньячной и винодельческой отраслей в РА;
- проанализировать различные методологические аспекты исследований виноградарского комплекса, зарубежный опыт применения этих подходов;
- проанализировать правовую базу, регулирующую виноградарский комплекс, и особенности государственного регулирования виноградарского комплекса РА;
- изучить производственно-экономические характеристики винодельческих хозяйств Армавирского района Республики Армения методом выборочного опроса;
- провести эконометрическую оценку влияния различных экономических факторов на производственные показатели отрасли виноградарства РА;
- оценить экономическую эффективность деятельности виноградарских хозяйств Армавирской области и характер влияния различных внутренних и внешних факторов;
- разработать рекомендации, направленные на решение проблем виноградарского комплекса и развитие комплекса.

Объектом исследования диссертации является виноградарский комплекс Армавирской области РА, а **предметом исследования** – экономические вопросы перспективного развития комплекса.

Среди результатов анализов и исследований, проведенных в диссертации **научной новизной** можно считать:

- ✓ Оценена эффективность деятельности винодельческих хозяйств Армавирской области РА и предложены эффективные варианты управления хозяйствами;
- ✓ В результате комплексного исследования виноградарских хозяйств Армавирского района РА были выявлены проблемы винодельческого комплекса региона, оценены возможности их развития;
- ✓ Выявлен характер влияния различных факторов на производственные показатели отрасли виноградарства РА;
- ✓ Предложены основные направления решения проблем виноградарского комплекса Армавирской области РА.

HOVHANNES SIMON ASATRYAN

THE DEVELOPMENT ISSUES OF THE VITICULTURE COMPLEX IN THE ARMAVIR REGION OF RA

The abstract of the dissertation for pursuing the degree of Ph.D. in economics in the field 08.00.02 “Economy, the economics of its spheres and control”.

The defense of the dissertation will take place at 13:30, on December 14, 2023, at the Meeting of the Specialized Council 015 in Economics of the RA SCC, acting at the Yerevan State University. Address: 52 Abovyan St., Yerevan 0025.

ABSTRACT

Viticulture is one of the oldest branches of the RA economy. It is a relatively labor-intensive branch of agriculture production and provides a high level of employment in rural areas. The normal functioning of such vital branches of the Armenian economy as the wine and brandy industries is largely determined by the state of viticulture. Essentially, the viticulture, wine, and brandy industries should be considered in the context of one general system called "the viticulture complex" because these three branches of the economy are closely related to each other and are the primary links in the value chain of alcoholic beverages made from grapes. The viticulture complex includes all economic entities involved in the "grape production- grape processing-consumption of the final product" value chain (grape harvesting, distillation of grape raw materials, raisin production, finished product release, as well as organizations specialized in purchase, storage, transportation, and sale of released products).

After several crises, the RA viticulture complex has recorded some growth and development in recent years, and in order to maintain such a trend, it is very important to identify the new challenges and obstacles facing the sector and find solutions. The need for a multifaceted and relevant study of the development prospects of the viticulture complex is determined by such "tectonic movements" as the new post-COVID economic realities, the Russian-Ukrainian conflict, and its economic consequences. **The relevance of the topic of the Dissertation** is conditioned by the important economic, social, and demographic role of the viticulture complex in the RA Armavir region.

The aim of the Dissertation is the comprehensive identification of the issues of the prospective development of the viticulture complex of the RA Armavir region and the proposal of ways of solving them. In the scope of this aim, **the following objectives were set in the Dissertation.**

- to study the state and dynamics of the development of viticulture, wine, and brandy industries in RA,

- to analyze the various methodological aspects of studies of the viticulture complex,
- to analyze the legal framework and the state regulation of the RA viticulture complex,
- to study the production and economic features of grape farms in the RA Armavir region by using the method of sample surveys.
- to perform an econometric assessment of the impact of various factors on the output indicators of the RA viticulture complex,
- to assess the economic efficiency of grape farms of the Armavir region and the determinants of farm efficiency,
- to develop recommendations aimed at solving the problems of the viticulture complex and development of the complex.

The object of the research in the Dissertation is the viticulture complex of the RA Armavir region, and **the subject** of the research is the different economic issues of the prospective development of the complex.

Among the results of the analyses and observations carried out in the scope of the Dissertation, the following can be considered **scientific novelties**:

- ✓ The efficiency of the grape farms of the RA Armavir region was evaluated and the best options of farm management practices were proposed.
- ✓ As a result of a comprehensive study of the grape farms of the RA Armavir region, the problems of the viticulture complex of the region were identified, and the development opportunities were assessed.
- ✓ The nature of the impact of various factors on the output indicators of the RA viticulture sector was revealed.
- ✓ The main directions for solving the problems of the viticulture complex of the RA Armavir region were proposed.

